ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«27» «հունվարի» 2026թ. ՆՄՈ/589-Ա

ք.Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի Ն ՄՈ/97-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի N269-Ն որոշման պահանջները, հաշվի առնելով 2026 հունվարի 1-ի դրությամբ և 2026-2027 ուսումնական տարվա սկզբի դրությամբ կամավոր ատեստավորված մանկավարժների փաստացի ծանրաբեռնվածությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. *Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2026 թվականի փետրվարի 19-ի «Դրամաշնորհ հատկացնելու մասին» Ն ՄՈ/97-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝*

1) *որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.*

2) «*1.* Հայաստանի Հանրապետության 2026 թվականին պետական բյուջեից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմին «Արտադպրոցական դաստիարակության ծրագիր» ծրագրով տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված 27 283 500 (քսանյոթ միլիոն երկու հարյուր ութսուներեք հազար հինգ հարյուր) Հայաստանի

Հանրապետության դրամ գումարից *22 248 600 (քսաներկու միլիոն երկու հարյուր քառասունութ հազար վեց հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ գումարը վերաբաշխել՝ համաձայն հավելվածի:».*

3) *որոշման 1-ին կետով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.*
4) *որոշման 2-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.*

«2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստ պարտականությունները կատարող՝ Ա.Հակոբյանին արտադպրոցական դաստիարակության ծրագրով նախկինում կնքված պայմանագրերում կատարել համապատասխան փոփոխություններ:»:

2. *Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:*

Восстановимая подпись

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 **Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

0901 ք. Արմավիր, Աբովյան 71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2026 թվականի հոկտեմբերի 27 -ի
ՀՄՈ/ 589 –Ա որոշման

<<Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի

2026 թվականի փետրվարի 19-ի
ՀՄՈ/97-Ա որոշման

ՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻՆ
<<ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ>> ԾՐԱԳՐՈՎ <<ԱՅԼ ՆՊԱՍՏՆԵՐ
ԲՅՈՒՋԵԻՑ>> ՀՈԴՎԱԾՈՎ

2026 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՒՄԱՐԻ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ

Հազար դրամ

h/h	*Համայնքի անվանումը*					*Տարի*
1	*2*	*3*	*4*	*5*		*6*
1	Վաղարշապատի համայնքապետարան					11536,4
2	Արմավիրի համայնքապետարան					6529,3
3	Փարաքարի համայնքապետարան					1993,3
4	Մեծամորի համայնքապետարան					2189,6

	ԸՆԴԱՄԵՆԸ			22 248,6

>>:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Գ.ԳԱՍՊԱՐՅԱՆ